



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ

Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ

«ՓՄՁ հանրության համախմբում՝ տեսչական գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների դեմ»

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՓՄՁ հանրության համախմբում՝ տեսչական գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների դեմ» ծրագիրը իրականացրել է Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,270,000 ՀՀ դրամ, որից 970,000 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2015թ.-ի հուլիսի 1-ից մինչև 2015թ.-ի սեպտեմբերի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

I. Ծրագրի շրջանակում ներկայացվող խնդիրը

Ինչպես հայտնի է, Հայաստանում 2009 թվից սկսվել և ընթանում են տեսչական ոլորտի բարեփոխումները, որոնց ամբողջական և լիարժեք իրականացումը հնարավորություն կտա բարելավել մասնավոր ընկերություններում պետական ստուգումների անցկացման ընթացակարգը և նվազեցնել կոռուպցիոն ռիսկերումները այդ ոլորտում:

Ընդհանուր առմամբ, տեսչական համակարգը Հայաստանում բնութագրվում է հետևյալ կերպ՝ հաճախակի, չհամակարգված եւ ոչ տեղին ստուգումներ, տեսուչների կոպիտ եւ անհարգալից վարքագիծ, ոչ թափանցիկ տեսչական գործընթացներ, գործառույթների կրկնորդում (վերահսկման միևնույն օբյեկտը միևնույն հարցով «ստուգման է ենթարկվում» բազմակի անգամ՝ տարբեր տեսչությունների կողմից): Հաճախ պարզ չեն տեսչության իրավասության ոլորտն ու շրջանակը: Հանրային վարչարարության մշակույթը, այդ թվում՝ նաեւ տեսչական մարմիններում, դեռեւս կենտրոնանում է սահմանված կանոնների հարկադիր կատարումն ապահովելու նպատակով վարչական իշխանության կիրառման շուրջ: Բացակայում է տնտեսավարող սուբյեկտին որպես «հաճախորդ» դիտելու մշակույթը, որին պետք է խրախուսել եւ օգնել իր գործունեությունը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու հարցում: Փոխարենը, փորձագետների գնահատմամբ, տնտեսավարող սուբյեկտների եւ տեսուչների փոխհարաբերությունները լուրջ խնդիր են առաջացնում նաեւ կոռուպցիայի տեսանկյունից:

Մասնավոր հատվածը գիտակցում է կոռուպցիայի հետ կապված վտանգը, որը խոչընդոտում է արդար մրցակցությանը և արգելակում է ազատ շուկայի զարգացումը: Կոռուպցիան անհամեմատ ավելի մեծ ճնշում է գործադրում հատկապես փոքր և միջին բիզնեսի վրա: Հայաստանյան փոքր ձեռնարկատերերի մեծ մասը չի ցանկանում կոռուպցիոն փոխհարաբերությունների մեջ գտնվել, սակայն ստիպված են հանդուրժել երևույթը որպես բիզնեսով զբաղվելու անհրաժեշտ պայման: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ ձեռնարկատերերը կոռուպցիային դիմակայելու համար աջակցության կարիք են զգում:

Տեսչական բարեփոխումների շարունակականությունը ապահովելու, արդյունավետ և արդիական տեսչական համակարգ ձևավորելու համար ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել իրականացնել տեսչական համակարգի և ստուգումների օպտիմալացման ծրագիր, որը նպատակ ունի իրականացնել առավել բարձր արդյունավետությամբ ստուգումներ, որոնք կբերեն հանրությանը մատուցվող

ծառայությունների որակի բարձրացմանը, կոռուպցիոն երևույթների կրճատմանը և պետական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Տեսչական բարեփոխումների ուղղորդման, պետության և գործարար համայնքի միջև արդյունավետ երկխոսության և համագործակցության ապահովման, գործարար համայնքի և հասարակության հետ համագործակցության և հետադարձ կապի ապահովման նպատակով շատ կարևոր է գործարար համայնքի իրազեկումը և ակտիվ մասնակցությունը հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման գործընթացին:

2015 թվականի հուլիսի 1-ին Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը մեկնարկեց «ՓՄՁ հանրության համախմբում տեսչական գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների դեմ» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրը իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,270,000 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար), որից 970,000 (ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2015թ.-ի հուլիսի 1-ից մինչև 2015թ.-ի սեպտեմբերի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից: Հաշվի առնելով վերոնշյալը, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը Ծրագրի շրջանակներում իրականացրել է ուսումնասիրություն՝ բացահայտելու համար ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների ընդհանրացրած տեսակետները տեսչական բարեփոխումների իրականացման ընթացքի և այդ ոլորտում դեռևս առկա կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ՝ այդ բարեփոխումների արդյունավետությունը օբյեկտիվորեն գնահատելու և հետագա քայլերի վերաբերյալ համապատասխան առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

II. Ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել ՓՄՁ հանրության կարողությունների հզորացմանը տեսչական ստուգումների ոլորտում կոռուպցիոն դրսևորումների դեմ

պայքարի գործում, խթանելով վերջինիս համախմբվածությունը և կարևորելով տեսչական ոլորտի բարեփոխումների ծրագրերում հակակոռուպցիոն տարրի ներգրավվածության անհրաժեշտության հարցը: Ծրագրի հիմնական խնդիրներն են.

- ✓ Ուսումնասիրել մասնավոր հատվածում տեսչական գործընթացների շրջանակներում առկա կոռուպցիոն դրսևորումների մակարդակը.
- ✓ Բարձրացնել ՓՄՁ հանրության իրազեկության աստիճանը տեսչական բարեփոխումների ընթացքի և դրանց հակակոռուպցիոն ազդեցության կարևորության վերաբերյալ.
- ✓ Կազմակերպել քննարկումներ ՓՄՁ հանրության ներկայացուցիչների մասնակցությամբ՝ տեսչական բարեփոխումների աջակցությանն ուղղված հակակոռուպցիոն մոտեցումների և առաջարկների մշակման նպատակով:

III. Ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները

Հարցախույզի իրականացում և արդյունքների վերլուծություն: Ծրագրով նախատեսված հարցախույզը նպատակ ուներ բացահայտել և հստակեցնել տեսչական ստուգումների ոլորտում կոռուպցիայի երևույթի դրսևորման մակարդակը և դրա նկատմամբ գործարար հանրության վերաբերմունքն ու դիրքորոշումը: Դրա համար մշակվել և հարցախույզի մասնակիցներին առաջարկվել է հատուկ հարցաշար, որում ներառվել են տեսչական ստուգումների ներկայումս գործող մասամբ բարեփոխված համակարգում դեռևս առկա խնդիրների և դրանցով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերի առկայության, ինչպես նաև կոռուպցիայի կրճատմանը նպատակաուղղված բարեփոխումներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ հարցեր: Հարցախույզի մասնակիցներին առաջարկվել է նաև իրենց կարծիքները տեսչական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վերաբերյալ: Որոշ հարցերի համար հարցման մասնակիցներին հնարավորություն է տրվել միաժամանակ նշել մեկից ավելի պատասխաններ: Հարցախույզն իրականացվել է հարցազրույցների և ֆոկուս-խմբերի միջոցով ընդհանուր թվով 100 մասնակիցների (փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչների) շրջանում՝ Երևան քաղաքում և Լոռու և Վայոց Ձորի մարզերում, պահպանելով մասնակիցների անոնիմության սկզբունքը՝ առավել անաչառ և օբյեկտիվ պատասխաններ ստանալու ակնկալիքով:

Հարցման արդյունքում ստացված տեղեկատվությունը ենթարկվել է խորը և համապարփակ վերլուծության, որը թույլ է տալիս ընդհանրական առումով գնահատել մինչ այժմ գործող համակարգի թերությունները և գործարար միջավայրի վրա ունեցած

բացասական ազդեցությունը, դրանով իսկ վկայելով տեսչական ստուգումների համակարգի բարեփոխման հրամայականի օգտին:

Հարցախույզի արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս նաև պատկերացում կազմել, թե ըստ գործարար հանրության, որոնք են տեսչական ստուգումների համակարգում կոռուպցիոն ռիսկերի աղբյուրները, գործարարներին ներկայացվող պահանջների հետ կապված դժվարություններն ու դրանց բնույթը:

Հարցախույզի արդյունքների ամփոփումը և ամբողջական վերլուծությունը ներկայացված է առանձին զեկույցում:

Կլոր-սեղան քննարկումներ և իրազեկում: Ծրագրի շրջանակներում ՓՄԲՀ-ն կազմակերպել է կլոր-սեղան քննարկումների շարք ՓՄՁ համայնքի ներկայացուցիչների և գործարար կառույցների մասնակցությամբ: Այդ քննարկումները նպատակառուղիված են եղել ինչպես տեսչական բարեփոխումների վերաբերյալ գործարարների իրազեկվածության աստիճանի բարձրացմանը, այնպես էլ հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունավետ իրականացման նպատակով գործարար համայնքի համախմբմանը: Քննարկումների ընթացքում տեսչական բարեփոխումների վերաբերյալ տարբեր տեսակետների և դիրքորոշումների արտահայտումը հնարավորություն ընձեռնեցին մասնավոր հատվածի ներկայացուցիչներին ազատ և անկաշկանդ կերպով բանավիճել տեսչական ստուգումների ոլորտում դեռևս առկա խնդրահարույց հարցերի և մասնավորապես կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ քննարկումները ձեռներեցներին տրամադրեցին տեսչական բարեփոխումների ոլորտում հակակոռուպցիոն ծրագրերի և նախաձեռնությունների վերաբերյալ արդիական տեղեկատվություն և գիտելիքներ, որը հնարավորություն կտա նրանց ավելի արդյունավետ կերպով գործել ընդդեմ կոռուպցիոն երևույթների:

Կլոր-սեղան քննարկումները անց են կացվել Երևան քաղաքում, Լոռու և Վայոց Ձորի մարզերում, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են մասնավոր հատվածի 50 (Երևանում՝ 20, Լոռու մարզում՝ 16 և Վայոց Ձորի մարզում՝ 14) ՓՄՁ ներկայացուցիչներ:



Դրվագներ կյոռ-սեղանի քննարկումներից

Ծրագրի արդյունքները և ընդհանուր ազդեցությունը

Ծրագրի արդյունքների ամփոփումը, վերլուծությունը և գնահատումը հնարավորություն տվեց ստանալ ծրագրով նախատեսված նախաձեռնությունների ազդեցության ընդհանուր պատկերը և արտացոլել այն սույն հաշվետվության մեջ ձեռքբերումների, քաղված դասերի և մարտահրավերների ձևաչափով:

Ծրագրի գործողությունները հնարավորություն են տվել հաջողությամբ իրագործել ծրագրի հիմնական նպատակները և խնդիրները ուղղված մասնավոր հատվածի իրազեկվածության բարձրացմանը և ավելի ակտիվ ներգրավմանը տեսչական ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը: Այդ առումով ծրագրի հիմնական արդյունքներն են.

- Տեսչական ստուգումների ոլորտում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ գործարար հանրության կարծիքի ուսումնասիրություն՝ հարցախույզի և դրա արդյունքների վերլուծության միջոցով.
- Տեսչական ստուգումների ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ մասնավոր հատվածի իրազեկվածության աստիճանի բարձրացում.
- Տեսչական ստուգումների ոլորտում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ ՓՄՁ հատվածի կողմից ներկայացված առաջարկների ամփոփումը և ամբողջականացումը:

Ծրագրի արդյունքների և ձեռքբերումների համադրումը թույլ է տալիս գնահատել ծրագրի ազդեցության ընդհանուր պատկերը ըստ ծրագրի գործողություններին համապատասխան:

Ծրագրով նախատեսված հարցախույզը հնարավորություն տվեց բացահայտել և հստակեցնել տեսչական ստուգումների ոլորտում կոռուպցիայի երևույթի դրսևորման մակարդակը և դրա նկատմամբ գործարար հանրության վերաբերմունքն ու դիրքորոշումը: Հարցախույզի արդյունքների վերլուծությունը վեր է հանում ՓՄՁ հատվածի տեսանկյունից բարեփոխումների առաջին փուլի արդյունքում ձևավորված և ներկայումս գործող տեսչական ստուգումների համակարգում ի հայտ եկած դրական տեղաշարժերը, ինչպես նաև դեռևս առկա և ՓՄՁ ոլորտի զարգացումը խոչընդոտող և կոռուպցիոն դրսևորումներին նպաստող հանգուցային խնդիրները: Իրականացված վերլուծությունը թույլ է տալիս նաև պատկերացում կազմել, թե ըստ գործարար հանրության, որքանով են ընթացող տեսչական բարեփոխումները դրականորեն ազդում գործարար միջավայրի բարելավման վրա և որքանով են նպաստում կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը: Հարցախույզի օգնությամբ ՓՄԲՀ-ն կարողացել է ՓՄՁ հանրությանը ներգրավել ռիսկերի վրա հիմնված տեսչական բարեփոխումների անհրաժեշտությունը հիմնավորող փաստական տվյալների հավաքագրման գործընթացում:

Ծրագրի շրջանակներում կազմակերպված կլոր-սեղան քննարկումները ասպարեզ հանդիսացան ակտիվ քննարկումների համար, հնարավորություն ընձեռնելով մասնակիցներին արտահայտելու իրենց տեսակետները և կարծիքները տեսչական բարեփոխումների կարևորության և արդյունավետության վերաբերյալ: Կլոր-սեղանի քննարկումների ժամանակ ձեռնարկատերերը կարողացան վեր հանել այն խնդիրները, որոնց հետ նրանք առնչվել են տեսչական ստուգումների ոլորտում: Այդ առումով, կլոր-սեղանները կարևոր խթան հանդիսացան հակակոռուպցիոն մոտեցումների արտահայտման, քննարկման և մշակման համար:

Ծրագիրն ունեցել է նաև լայն իրազեկման ազդեցություն՝ հնարավորություն տալով գործարար հանրությանը և քաղաքացիական հասարակությանը տեղեկացված լինելու երկրում իրականացվող տեսչական ստուգումների համակարգի բարեփոխումներին և նախատեսվող փոփոխություններին: Ծրագրի միջոցառումների միջոցով իրականացված հանրային իրազեկման շնորհիվ մասնավոր հատվածի բազմաթիվ ներկայացուցիչներ հնարավորություն են ստացել օգտվել տեսչական ստուգումների գործընթացներում իրենց շահերին վերաբերվող արդիական տեղակատվության ստացման հնարավորությունից, որն օգնել է նրանց ավելի պատրաստված և տեղեկացված կերպով կազմակերպել իրենց հետագա գործունեությունը և խուսափել կոռուպցիոն երևույթներում պարտադրված կերպով ներգրավված լինելուց:

Ձեռնարկատիրությունը ունի կոռուպցիային դիմակայելու լուրջ հիմքեր և հնարավորություններ, և այդ առումով ծրագիրը հնարավորություն ընձեռնեց գնահատել և խթանել Հայաստանի ՓՄՁ հատվածի կարողությունները տեսչական ստուգումների ոլորտում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարում և համախմբել փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին տեսչական բարեփոխումների գործընթացը ամբողջական և լիարժեք իրականացնելու և ՓՄՁ համայնքի համար այդ գործընթացը մասնակցային դարձնելու համար:

V. Ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկած մարտահրավերներ

Ծրագրի հաստատումից անմիջապես հետո չնախատեսված հանգամանքների հետևանքով որոշակի դժվարություններ առաջացան ծրագրի առաջարկով նախատեսված Տավուշի մարզում ծրագրի գործողությունների իրականացման համար: Ծրագրի ընթացքը չխաթարելու և ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով կազմակերպության ղեկավար մարմինների կողմից որոշում կայացվեց ծրագրի գործողությունները Տավուշի մարզի փոխարեն իրականացնել հարևան Լոռու մարզում:

Ծրագրի իրականացման ընթացքում, հատկապես մարզերում թիրախային խմբերի ներգրավման ժամանակ նկատվեց ընդգծված վախի և անվստահության դրսևորումներ մասնավոր հատվածի ներկայացուցիչների մոտ, որի պատճառը մասնավոր հատվածի տեղեկացվածության և իրազեկվածության թույլ մակարդակն է և դրա հետևանքով իրավական պաշտպանվածության զգացողության բացակայությունը:

Այս առումով մասնավոր հատվածը ներկայացնող հասարակական կառույցները թերևս լուրջ անելիք ունեն մարզերում: Ծրագրի միջոցառումների իրականացման ընթացքում անոնիմության սկզբունքի կիրառումը հնարավորություն ընձեռնեց հաղթահարել հոգեբանական ճնշվածության և վախի մթնոլորտը մարզերում և խթանել աշխույժ քննարկումներ և տեսակետների ազատ ու անկաշկանդ արտահայտում:

Կազմակերպության ղեկավար՝

Գայանե Պողոսյան

Ամսաթիվ՝ 22 հոկտեմբերի, 2015թ.